

# ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ ղիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց քողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շնորհանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1

Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձներում է գրվում յ.

- 1) ատամնաբու-ժ, Սերգե-ի, հա-ելազարդ, լոելյա-ն
- 2) Նա-իրի, սկեսրա-ր, երեխա-ի, աղյուս-ակ
- 3) խնա-ել, հետի-ոտն, ջղա-ին, աշխու-ժ
- 4) տու-ժ, հեռակա-ել, է-ական, արքա-որդի

2

Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով.

- 1) (Տեր) Ավագյան, քաշել (քաշըշել), քաղաք (ամրոց), փայել (փայփայել)
- 2) ունեցած (չունեցած), ուսանող (ուսանողուիի), վառ (նարնջագույն), ստորակետ (գիծ)
- 3) սուս (փուս), ջրմուղ (կոյուղի), պատեհ (անպատեհ), չորս (միլիոն) անց
- 4) ալ (կարմիր), քաշել (մոտեցնել), ուրախ(զվարք), տալ (առնել)

3

Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) մեջ փոքրատառով գրվող բաղադրիչ կա.

- 1) ՖՈՒՏԲՈԼԻ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՅՈՎԵՆ, ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿԻՐԱ
- 2) ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾՐՈՒՆՅԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԴԱՆԱՆՅ ՓՈՂՈՑ, ԳԻՏԵԼԻՔԻ ՏՈՆ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄՐԱՎՔՅՈՒՐ
- 3) ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ԿՈՍԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, ՀԻՊՈԿՐԱՏԻ ԵՐԴՈՒՄ, ԶԻԹԵՆՅԱՅ ԼԵՌ
- 4) ՄԻԿԼՈՒԽՈ ՍԱԿԼԱՅ, ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՅԻ, ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆԻ ԹԱՐԵՎՈՍՅԱՆ, ՍԱՀԱՐԱՅԻ ԱՆՍՊԱՏ

4

Տրված բառերից քանիսն ու մեկից ավելի հնչյունափոխություն կա.

բրդատվություն, մատենագրություն, բնութագրական, ծննդյան, դատրիկ, չվացուցակ, միջնորմ, պատվախնճրորեն, քննաշրջան, հանդգնել:

- 1) ութուն
- 2) բոլորուն
- 3) հինգուն
- 4) յոթուն

5

Տրված բառերից քանիսն են հոմանիշ դաժան բառին.

սինլրոր, անազորույն, ամրարտավան, ժամտ, դժնի, դժկամ, դժխեմ, բիրտ, անողորմ, դժոխալուր:

- 1) յոթը
- 2) վեցը
- 3) բոլորը
- 4) ութը

6

Ո՞ր նախադասության մեջ փոխարերաբար գործածված բառ չկա:

- 1) Հեծյալը քարացավ իր ձիու վրա:
- 2) Բնության գեղեցկությունը կախարդել էր մեզ:
- 3) Այդ դառը խոսքերը խայթեցին նրան:
- 4) Դանդաղ քայլում է հոչակավոր բանաստեղծը:

7

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:
- 2) Ուսուցուիին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներկուն աշակերտներին:
- 3) Ասպետական ընտանիքում միշտ էլ հաճելի է հյուրընկալվելը:
- 4) Հորեղբայրս հայտնի որսորդ է, սակայն վերջերս խիստ զբաղված լինելու պատճառով արդեն ստեպ-ստեպ է գնում որսի:

8

Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ -աւս վերջածանցը և նոր բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).

գանգամաշկ, կիսամյակ, հաստարում, ամրակուռ, կավածեկի, քնարաբախ, ասիկար, ձյունափայլ, արևավառ, հոգեառ:

- 1) ութի
- 2) հինգի
- 3) երեքի
- 4) իննի

9

Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:

- 1) աստղագետներ, ոտնաձայններ, որմնասյուներ, արծվաբներ
- 2) նյութամոլներ, մարզադաշտեր, սպունգներ, լուսամուտներ
- 3) կոնյակագործներ, գազամուղներ, դաշույններ, խտանյութեր
- 4) գործատերեր, նշագեղձեր, կողմնացույցներ, լեզվաբաններ

10

Տրվածներից քանի՞սը գերադական աստիճանով դրված ածականներ չեն.

ամենագեղեցիկ, ամենաշնորհ, ամենամեծ, ամենախոր, ամենավատ, ամենահողիչ, ամենաաջերմ, ամենափոքր, ամենասեղմ, ամենատես:

- 1) երեքը
- 2) ոչ մեկը
- 3) մեկը
- 4) երկուսը

11

### Նախադասություններից քանիստ՞ւմ ներգործական սեռի բայ կա:

- Նախորդ դարերում այս ու այնտեղ առկայժած որմնանկարչությունը փթթեց Տաքեում և Անիի տաճարներում:
- Կան նաև ուրիշ հանգամանքներ, որոնք հիմնավորապես մերժում են Գլածորը Թանահատում տեղադրելու վարկածը:
- Ուսումնատենչ երիտասարդները օտար համալսարաններում էին մեղմացնում իրենց ուսման ծարավը:
- Այս քանիկան ձեռագիրը մեզ է հասել հազարամյա պատմության խորքերից:
  - 1) Երկուսում
  - 2) Երեքում
  - 3) Չորսում
  - 4) Մեկում

12

### Ո՞ր տարրերակում ենթադրական եղանակի բայաձև չկա:

- 1) Զի դավաճանում ոչ մի ժամանակ Հյուրընկալության հինավորց ոճին:
- 2) Ա՛խ, նորից «Բարի՛ ճամփա»,  
Ա՛խ, նորից «Մնա՛ բարով»...  
Սի տեսակ տագնապ կա, որ  
Չես ասի ոչ մի բառով:
- 3) Մենավորի իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն,  
Կարոտիդ կանչը չի հասնի նրան...
- 4) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաճայն երգերը մեր...

13

### Նախադասություններից քանիստ՞ւմ մակրայ կա:

- Նամակի հետ նա աղջկան ուղարկեց նաև մի քանի անհրաժեշտ իրեր:
- Կնոջ թափառիկ հայացքը հանդիպեց Կոմիտասի աչքերին, հետո նորից կուշ եկավ ոտքերի մոտ, և նա շարունակեց ակնկոր փնտրել կորցրածը:
- Վարագույրների բարձրանալուց հետո տեսա՛ բոլորը ոտքի են ելել և փայլող աչքերով նայում են ինձ:
- Սկսեց քայլել մինչև փողոցի շրջադարձն ու հետ՝ ուշադիր նայելով անցորդներին:
  - 1) Երկուսում
  - 2) Երեքում
  - 3) ոչ մեկում
  - 4) Մեկում

14

### Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:

- 1) Ոչ ոք չկար. լսվում էր միայն մեղուների բզբոցը:
- 2) Մթնում էր, երբ մենք հասանք լեռան ձյունապատ գագաթին:
- 3) Եկել էր ինձ մոտ, որ գործի մանրամասները քննարկենք:
- 4) Խոսելը նրա սիրած զբաղմունքն է, բայց շատ է այն շարաշահում:

15

Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը բաղադրյալ ստորոգյալ:

- 1) Օրերով տնից դուրս չեր գալիս:
- 2) Դանդաղ քայլում է ձիս հայրենի արահետներով:
- 3) Թաղի տղաները մի տեսակ դժվարությամբ էին ընկերանում միմյանց հետ:
- 4) Նա հորս մտերիմ ընկերն է եղել և գործակիցը:

16


Ո՞ր նախադասության մեջ գոյականով արտահայտված խնդիր կա:

- 1) Նրա համար ընտրում են ամենաքաղցր պտուղները:
- 2) Ինձ պարտվելը նրա համար սովորական բան էր:
- 3) Փողոցի ծայրից ես մի անգամ էլ հետ նայեցի:
- 4) Բաժանվել եր կերակուրք, և լսվում եր գոյալների շնորհականությունը:

17

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

*Խնդիրը նշում է՝ թե ահա ուր որ է կկռաճա, զետմից կվերցմի մի մեծ քարի կտորը ու կշառութիւնը փախչողի ուղղությամբ:*



18

Տրված քարդ ստորադասական նախադասություններից որի՞ երկրորդական նախադասությունն է ենթակա:

- 1) Ու գիտեմ իիմա՝ մի սովորական Աղջիկ էիր դու՝ նման ամենքին:
- 2) Մի՞թե արժանավորը նա չեր, ով քեզ փրկեց կործանումից:
- 3) Չեմ կարող մոռանալ, թե ինչպիսի տիսուր ու աղերսող աչքերով էր մեզ նայում վիրավոր եղնիկը:
- 4) Ով քաղաքից եր հեռացել, Նա թողել էր մշուշը ծեր:

19

Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված քարդի:

*Պերսևը աշխարհով մեկ ճանապարհորդելուց հետո գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:*

- 1) Երբ Պերսևը ճանապարհորդում էր աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:
- 2) Պերսևը, որ գլուխը կորցրել էր, աշխարհով մեկ ճանապարհորդելուց հետո եկավ հավերժահարսերի մոտ:
- 3) Պերսևը, որ ճանապարհորդեց աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:
- 4) Պերսևը, երբ ճանապարհորդել էր աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:

20

## Նախադասություններից քանիստ՝ կետադրական սխալ կա:

- Այնտեղ ծաղիկներ կային, չբնաղ ու բյուրազան ծաղիկներ՝ թիթեռների պես սփոված ու թրռուն:
  - Մի որք ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մեջ, գիշերը տեղ չուներ՝ գլուխը դնելու և հաց չուներ՝ ուտելու:
  - Քանի տարի էր, ինչ Թուրքանուտա Ջորոն և Փալանձի Գրիգորն ամուսնացած էին, բայց հակառակ բուռն ջանքերի՝ զավակ չունեցան:
  - Թորիկին հետաքրքրում էր փողոցում ամեն բան. եթե արջ էին խաղացնում, դիտում էր, եթե տեսնում էր, որ մի դրան առաջ հավերը կուտ են ուտում, կանգ էր առնում ու երկար դիտում:
  - Տակավին լսում էր նա երգը, և նրան, թվում էր, թե լեռնային լանջերի ծաղիկներն են երգում:
  - Նրա հայացքը մի վայրկյան ընկավ լուսամուտից դուրս. մի մեղմ գիշեր էր և աստղերը մտերիմ աչքերի պես բարթում էին:
- 1) չորսում
  - 2) մեկում
  - 3) երկուսում
  - 4) երեքում

21

## Ո՞ր հայերենով է տրված հատվածը:

*Հոյր հորիզոնն մարեցավ,  
Երկինքն աստղեր փթթեցան,  
Համրոյր մ'առի դարձյալ ես  
Հանուն աստեղց ցիրևան:*

- 1) գրաբար
- 2) արևմտահայերեն
- 3) միջին հայերեն
- 4) արևելահայերեն

22

## Ո՞ր պնդումն է սխալ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերաբերյալ:

- 1) Հերինակը քննական պատմություն ստեղծելու առաջին փորձն է կատարել՝ ստուգելով, ճշտելով իրեն հայտնի բոլոր փաստերը:
- 2) «Հայոց պատմությունը» Խորենացին գրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով:
- 3) Հայ մատենագրության մեջ այն առաջին գրավոր հուշարձանն է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ նրա կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները:
- 4) Խորենացին իր պատմությունն ավարտել է նշանավոր «Ողբ հայրենասիրի» գլխով:

23

Նշվածներից ո՞վ է Վարդան Այգեկցու ընտիր առակների մի փունջ վերածել աշխարհաբարի:

- 1) Ավետիք Իսահակյանը
- 2) Ակսել Բակունցը
- 3) Հովհաննես Թումանյանը
- 4) Հովհաննես Շիրազը

24

Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Ես վեհ վայրկեմին չըքնաղ զիշերի՝  
Երկրնքի անհո ին, հեռու խորքերից,  
Անմուրազ մեռած սիրահարների  
Սսողերը թռոած իրար են զալիս,  
Գալի ս՝ կարոտով մի հեղ համբուրզում  
Աշխարհից հեռու ՝, լազուր կամարում:

- 1) «Fatum» (Վ. Տերյան)
- 2) «Անուշ» (Հ. Թումանյան)
- 3) «Արա Գեղեցիկ» (Ն. Զարյան)
- 4) «Հավերժական սերը» (Ավ. Իսահակյան)

25

Պնդումներից ո՞րն է ճիշտ Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության վերաբերյալ:

- 1) Բանաստեղծի հավատարմության երդումն է հայրենիքին:
- 2) Նրանում զարգանում է փիլիսոփայական այն խոհը, թե կյանքի ու մահվան սահմանագծից է սկիզբ առնում անմահության գաղտնիքը:
- 3) Հասարակությունից օտարված անհատի դրաման է, որտեղ բնության չքնաղ մի բեկորը հանդես է գալիս որպես բանաստեղծի խոռվահույզ սրտի հանգրվան:
- 4) Բանաստեղծի վեճն է Աստծու հետ:

26

Տրվածներից ո՞րը ճիշտ չէ Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի վերաբերյալ:

- 1) Սյունյաց Բակուր իշխանը, վախենալով Տիրան արքայից, դժկամությամբ է իր հարկի տակ ընդունում Տրդատ Բագրատունուն:
- 2) Տրդատը, իրապուրվելով Բակուր իշխանի հարճ Նազենիկով, վախսնում է նրան, սակայն Բակուրը հետապնդում է նրանց և սպանում Նազենիկին:
- 3) Նազենիկի աճյունը Տրդատի կարգադրությամբ ամփոփում են մի չորացած բարդու տակ, որը դրանից հետո վերընճյուղվում է:
- 4) Տիրան արքայի փեսան՝ Տրդատ Բագրատունի իշխանը, ծեծել է կնոջը, կտրել նրա մազերը և հեռացել:

27

**Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

- ա. Կարծես թե սիրո քննքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին
  - բ. Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին
  - գ. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց
  - դ. Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց
- 1) դ, բ, գ, ա
  - 2) բ, ա, դ, գ
  - 3) դ, ա, գ, բ
  - 4) ա, գ, դ, բ

28

**Եղիշե Չարենցի ո՞ր բանաստեղծությունից է մեջբերվող քառասոսը:**

...Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,  
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ-  
Տա մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ  
Ու օրորվեմ՝ եղերական ու անքասիր...

- 1) «Տաղ անձնական»
- 2) «Հեռացումի խոսքեր»
- 3) «Մահվան տեսիլ» («Որպես լրված թափօրթակի...»)
- 4) «Անվերնազիր» («Իմ մահվան օրը...»)

29

**Զախ կողմում նշված են Ակսել Բակոնցի պատմվածքները, իսկ աջում՝ դրանցից մեկական հատված. ո՞ր տարրերակի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- |                        |                                                                                                                                                   |
|------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ա. «Մթնաձոր»           | 1. «Այդ կինը երբեք բոքիկ ոտքերով չի քայլել, չի նստել մխացող աքարի առաջ»:                                                                          |
| բ. «Սիրիավ»            | 2. «...Նայում էի գրատախտակի թվերին, աչքերիս առաջ բրդե շալով աղջկա գլուխը, ոտքերը ձյունի մեջ և ձյունի ճերմակության վրա օձի պես սև պարանը»:         |
| գ. «Խոնարի աղջիկը»     | 3. «Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նոյնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում»: |
| դ. «Ալպիական մանուշակ» | 4. «Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը»:                                                        |
- 1) ա-3, բ-4, գ-2, դ-1
  - 2) ա-3, բ-4, գ-1, դ-2
  - 3) ա-4, բ-3, գ-2, դ-1
  - 4) ա-3, բ-2, գ-4, դ-1

30

### Ո՞ր պնդումն է սխալ Շահան Շահնորիի «Նահանջը առանց երգի» վեպի վերաբերյալ:

- 1) Վեպում պատկերված են օտարության մեջ հայտնված հայ մարդկանց սիրո և բարոյականության խնդիրները:
- 2) Վեպում ազգային ակունքներից նահանջի և հայապահպանության խնդիրներն արձարձված են Պիեր-Նենեթ դրամատիկ սիրավեպին համաձույլ:
- 3) Օտար միջավայրն ու բարքերը չեն ազդում ֆրանսիացի չղարձած Պետրոսի վրա, և նա Նենեթի մահից հետո հայերենով արտասանում է «Հայր մեր»-ը:
- 4) Հեղինակը դիտարկել է Ֆրանսիայում նոր-նոր ձևավորվող հայ գաղութի կյանքը:

31

### Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:

*Դու՝ մեր երգի Սեսրուց Մաշտոց,  
Գիրն ու տառն ես Հայոց երգի:  
Հայոց երգի  
Ամծիր հերկի  
Եվ ակոսն ու խորունկ առն ես,  
Եվ մատմբնայիր սերմը մրա,  
Եվ խոստումը գալիք բերքի...*

- 1) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
- 2) «Եռաձայն պատարագ»
- 3) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 4) «Անլոելի գանգակատուն»

32

### Տրված բնորոշումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Անդրանիկ Ծառուկյանը, Մուշեղ Իշխանը և Վազգեն Շուշանյանը սփյուռքահայ գրողներ են:
- 2) Խաչատոր Աբովյանը, Պետրոս Դուրյանը և Սիրայել Նալբանդյանը 19-րդ դարի հեղինակներ են:
- 3) Դանիել Վարուժանը, Սիամանթոն և Նար-Դոսը արևմտահայ հեղինակներ են:
- 4) Ազարանգեղոսը, Փավստոս Բուզանդը և Ղազար Փարպեցին 5-րդ դարի պատմիչներ են:

33

### Տրված գոյականներից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ.

գրավատուն, դրւատր, ճամփեզր, արարողակարգ, պատճեն, դաշտամուկ, ջրագիծ, հաղորդաշար, լրագիր, անասնապահ, գլխատառ, մեղվարույժ:

34

### Տրված հատվածում քանի<sup>o</sup> ուղիղ խնդիր կա:

Թե ուր գնացին Հուդային սպանած երկուսը, չիմացվեց, բայց թողնելով ծանոթ արահետը՝ նա խորացավ ձիթենիներով շրջապատված տարածքը՝ քսակի ոսկիները շարտելով իր շուրջը հայտնվող մուրացիկներին, ձեռքի դողացող ափերը անցորդներին ուղղած:

35

**Տրված բառերից քանիսո՞ւմ բաց թողած տեղում պետք է գրվի *հ*.**

խոնար-վել, հեղ-եղուկ, հեղ-եղատ, շնոր-ք, ընդ-ատել, արհամար-անք, ժպիր-,  
տարաշխար-իկ, հայ-ոյանք, հայթ-այթել:

36

**Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սը չեն գործածվել.**

մակդիր, համեմատություն, հանգավորում, փոխարերություն, չափազանցություն:

*Հոգ չէ, որ մեր օրերն անցան տեսնի պես,  
Կյանքը դարձավ անմիշիքար զառանցանք.  
-Մենք կժպտանք, զոհ կժպտանք մեռնելիս,  
Որ երազում երազեցինք ու անցանք...*

37

**Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:**

Սանդուղքի վրա լսվեց վերև բարձրացող ինչ-որ մարդու ոտքերի ձայնը: Իր ալեկոծ մտքերին անձնատուր՝ անաղմուկ քայլերով մտավ նախասենյակ: Անտառի զմրուխտ թափուտներից եկող զովք մի պահ հասավ իրեն, բայց թռուցիկ հայացքով նայելով անորոշ ուղղությամբ՝ նա նորից փակեց փեղկը՝ լարված սպասելով լուրի:

38

**Քանի՞ վաղակատար ճևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Ամբողջ մի դար՝ հարյուր տարի էր ապրել Մարգարիտ տատը, և որդիներն ու դուստրերը վաղոր արդեն իրենք էին անգարդ պապիկներ ու տատիկներ դարձել, բայց նա դեռ ապրել էր ուզում և արարել:

39

**Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1. քնքուշ, 2. աշխարհ, 3. ազդու, 4. ձգան, 5. վարք, 6. խցան, 7. իրապարակ,
8. լուսին, 9. հրաման:

40

**Նշել այն բառերի համարները, որոնցում ձայնավորի սղում կա.**

1. բացառիկ, 2. առաջնային, 3. մաքրակենցաղ, 4. լուսավոր, 5. զինամթերք,
6. պատանյակ, 7. փոքրիկ, 8. ձեղնահարկ, 9. հնանալ:

41

**Նշել այն նախադասությունների համարները, որոնցում և-ից առաջ ստորակետ պետք է դրվի:**

1. Նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում անպարփակ վիշտը հոգու մեջ և ցավակից եղավ անօգ մարդուն: 2. Սուակ նրան իր արտի մեջ իմացավ աշխարհի բոլոր ծայրերում էլ վիշտը մեկ է և սերը մեկ: 3. Նա հյուսեց բոլորի համար իր երգը եղավ այլեայլ երկրներում և մի օր վսեմափայլ երգիչը հոգնարեկ վերադարձավ հայրենի տուն: 4. Երգի մրմունջով ելավ Արագածի գագաթը լուսահորդ ու ճերմակափառ և ընկողմանեց բույրիթույր ծաղիկների մեջ: 5. Ծախրում էին ծիածանաքը հավքերի երամները վերը երկնի լազուրում և միմյանց ձայն էին տալիս հոգեթրթիո դայլայլով: 6. Ներքեսում նա տեսավ քաղաքներ շեներ և լսեց հայաբառ շնաշխարհիկ երգը հերկվորի:

42

**Նշել այն շարքերի համարները, որոնցում միայն բանաստեղծական ժողովածուների կամ շարքերի վերնագրեր են:**

1. «Գարնանամուտ», «Տաղարան», «Մթնշաղի անուրջներ»
2. «Յեղին սիրտը», «Նոր տաղեր», «Վերադարձ»
3. «Հացին երգը», «Ուսկի հեքիաթ», «Մարդը ափի մեջ»
4. «Ծիածան», «Հուշարձան մայրիկիս», «Մթնաձոր»

43

**Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անկախ դերքայ կա:**

1. Նա մանրազնին ուսումնասիրել է այդ ջրառատ գետը և հայտնաբերել մի հյուկապ ջրվեժ, որը կոչվեց Վիկտորիա՝ ի պատիվ Անգլիայի թագուհու:
2. Սևադան սրդողած պատմեց, որ հաղթանակից հետո թագավորն իջել էր Սևորդյաց ձորը:
3. Լեռնալանջերի ճերմակաբույր ձյունը հալվել էր, սարերն առաջվա նման ամպրոպներին չէին արձագանքում:
4. Իտալիայի կառավարությունը հապալապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
5. Թեքությունն այնքան զգալի է, որ մարդ ինքնապաշտպանական բնագրով հետ է քաշվում:
6. Առաջին հայացքից կարծես թե հանցանքը մատնող որևէ նշան չկար:

44

**Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների համարները:**

*Գարդմանա իշխանը՝ Սևադան, խորազնին հայացքը ուղղեց իր հոգու ներսը, որպեսզի այնտեղ փնտորի Մարզպետունու խորհրդավոր ակնարկի պատասխանը, սակայն ավելի վայելու համարեց լրելլ:*

1. **որպեսզի** – նպատակի պարագա, փնտրի – պարզ ստորոգյալ
2. **իր** – հատկացուցիչ, **հոգու ներսը** – տեղի պարագա
3. **խորհրդավոր** – որոշիչ, **պատասխանը** - ենթակա
4. **ակնարկի** – հատկացուցիչ, **լրելլ** – ուղիղ խնդիր
5. **Սևադան** - բացահայտիչ, **խորազնին** – ձևի պարագա

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Սխալ է, Զգիտեմ տարրերակներից որևէ մեկը:

1. Այն գոյականները, որոնք չունեն եզակի թիվ, կոչվում են անհոգնական գոյականներ:
2. Ոչ բոլոր բազմավանկ բառերի հոգնակին է կազմվում **ներ** վերջավորությամբ:
3. **Անդեր, Կարպատներ, Հիմաղայներ, Ազեր** անունները անեզական գոյականներ են:
4. **Մարդ** գոյականի հոգնակին կազմվում է երկու ձևով՝ **մարդիկ** և **մարդեր**:
5. Բոլոր միավանկ բառերի հոգնակին կազմվում է **եր** վերջավորությամբ:
6. **Տիկին, պարոն, անձ** բառերը հոգնակին կազմում են երկու ձևով:

## Բ մակարդակ

46

Քառերից քանիսո՞ւմ է գրվում *p.*

մակ-մթացություն, կոր-մթարդ, իմքն-ստիմքյան, հոտ-մկայս, զիրկ-մղիսուն,  
երկ-մտրանք, լուս-մկա, խոչ-մղոտ, առ-մշվել, առ-մթեր:

- 1) ութում
- 2) յոթում
- 3) վեցում
- 4) իննում

47

Ո՞ր շաբքի ոչ մի բառում գաղտնավանկ չկա:

- 1) չարչարանք, երփներանգ, ծանրամարտ
- 2) ծաղկաման, աննկատելի, ակնահաճոն
- 3) առանցք, ջերմաչափ, ունկնդիր
- 4) կարծր, ըմբոստ, ընկերական

48

Ո՞ր շաբքի բոլոր բառերում ձայնավորի կամ երկհնչյունի սղում կա.

- 1) պատմական, բարենպաստ, ոյուցազներգություն, գործնական
- 2) ոճրագործ, բուրավետ, երկրաչափություն, վրեժխնդրություն
- 3) դեղնակտուց, ակնոցավոր, մարդկություն, կցակառուց
- 4) կապտարթույր, պատրանք, աստղաբույլ, ձանձրույթ

49

Ո՞ր շաբքի բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:

- 1) ջրի երես դուրս գալ, բերանը փակել, սայլ նստել
- 2) զիվին կոտրել, գիրք գրել, հին երգը երգել
- 3) ձեռքը վնասել, կապը կտրել, սանձը քաշել
- 4) ձեռքն ընկնել, սիրտն առնել, բռան մեջ հավաքել

50

Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:

- 1) *հոգու աշքեր* - ներզգացողություն
- 2) *ձեռքը բռնել* - արգելել
- 3) *ջուրը զցել* - անօգուտ վատնել
- 4) *մի սամրի կտալ* - միևնույն գործին նվիրված

51

Տրված քառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.

- 1) ապերջանիկ= ապ+ երջան+ իկ
- 2) վայելչագրություն = վայել+(ու)չ+ ա+ զ(ի)ր+ություն
- 3) կառամատուց = կառ+ ա+ մատ+ուց
- 4) խորհրդակցություն = խորհ+(ու)րդ+ ա+կ(ի)ց+ություն

52

Ո՞ր շարքում միայն մեկ ածանց ունեցող բառ կա:

- 1) անհաճո, անհամահունչ, անցումային, անհագուրդ
- 2) անառիկ, անենթակա, բռչուն, անկարևոր
- 3) անասուն, անզգայուն, անընդհատ, անիրական
- 4) անզիտակ, ներկայություն, անձավային, անդադրում

53

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում առ ներքին հոլովման:

- 1) գրություն, ջրշուն, գարուն, գինետուն
- 2) ձյուն, մանկություն, մահ, ուղղանկյուն
- 3) աշուն, արյուն, անկյուն, գրատպություն
- 4) տեղանուն, գրատուն, հեռագրայուն, հարություն

54

Ո՞ր նախադասության մեջ դիմորդը հողի գործածություն կա:

- 1) Աշխարհս մե փանջարա է,- թաղերումնեն բեզարիլ իմ....
- 2) Սիրում եմ աչքերիդ տիսրությունը խորին....
- 3) Այցս ապարդյուն էր. այդպես էլ չհաշտվեցինք:
- 4) Միամիտդ դարձար բանսարկումների ձեռքին խաղալիք:

55

Հատվածներից քանիսո՞ւմ սուլածանցավոր բայ կա:

- Կացինս թողած կաղնու փշակում,  
Պարանս ժայոհի փեշերին թողած...
- Եվ ձորերում դառն ու անհուն  
Կորցնեի տոհմ ու անուն  
Ու կորչեի ես...
- Քառասուն տարի բռնած ճանապարհ՝  
Շիտակ, անվեհեր  
Գնում եմ ես վեր:
- Էլ սիրտս ինչպե՞ս բախտավոր մնար,  
Թե ինքը իրեն բացել չինանար...

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) չորսում
- 4) մեկում

56

Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Այնպես էին խառնել ամեն ինչ՝ սատանան իսկ գլուխ չէր հանի:
- 2) Հենց գարունը բացվի, կտեղափոխսվենք:
- 3) Չնայած սառնամանիքին՝ մրցումները չին դադարել:
- 4) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:

57

### Ո՞ր նախադասությունն է քարդ:

- 1) Ըստ ամենուրեք փակցված ազդագրերի՝ համերգը տեղի է ունենալու ամսի 25-ին:
- 2) Որպես հմուտ խոհարարի՝ եղբորս հրավիրում էին՝ մեծ խնջույքների, հարասնիքների պատրաստություն տեսնելու:
- 3) Աշուն է, այգում՝ տերևաքափ:
- 4) Ես, նստածներին շնորհակալություն հայտնելով, դուրս գնացի:

58

### Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ականավոր լեզվաբան Մանուկ Աբեղյանը ծնվել է 1865 թվին Նախիջևանի Աստավատ գյուղում:
- 2) Սովակների ոլորքով կանգնած բարդիները մեղմ օրորվում էին ինչպես խմբապարի հավաքված աղջկներ:
- 3) Նրա իմ վաղեմի ծանրթի հետ իջևանել էի երկրաբանների վրանում:
- 4) Շեներն ու գյուղակներն իրար միացնող խճողված ճանապարհների հազիվ ընդգծված եզրերին քամին կուտակել էր ծիածանի բոլոր գույները:

59

### Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված քարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները:

1. Թեև հազին ռազմական հանդերձանք էր, սակայն դա բնավ չէր նսեմացրել նրա կանացի թովշանքը:
  2. Թե հնար լիներ գտնել ձեռագիր մատյանների և մեղեղու գունային համապատասխանությունը, կստանայինք նրբահյուս մանրանկարների և զարդերի ձայնաշարեր:
  3. Նա պարզ տեսնում էր, որ իր հրապույրը մարդկանց աչքում պայմանավորված է մեծ մասամբ իր հարստությամբ:
  4. Հենց ծնողների ցանկությունն էլ այն էր, որ նա մոռանար արտասահմանում կրությունը շարունակելու մասին:
- ա. պայմանի պարագա  
բ. ժամանակի պարագա  
գ. ուղիղ խնդիր  
դ. ստորոգելի  
ե. զիջման պարագա
- 1) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ
  - 2) 1-ա, 2-ե, 3-դ, 4-գ
  - 3) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
  - 4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ

60

Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:

- 1) *Սարերում այնքան լուռ է, որ շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվում է:*  
Սարերում շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվելու չափ լուռ է:
- 2) *Նրան պառկեցրին, որ մի քիչ հանգստանա, հետո ճանապարհ զցեցին:*  
Նրան պառկեցրին՝ մի քիչ հանգստացնելու և հետո ճանապարհ զցելու համար:
- 3) *Եթե մի քիչ ավելի հեռու լիներ, նրա շարժումները չեն երևա:*  
Մի քիչ ավելի հեռու լինելով՝ նրա շարժումները չեն երևա:
- 4) *Նրա երազանքն այն էր, որ դասերը թողնի ու գյուղ վերադառնա:*  
Դասերը թողնելն ու գյուղ վերադառնալը նրա երազանքն էր:

61

Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Իր բախտին ու բեռանը հնազանդ նա դանդաղ բարձրանում էր նեղ արահետով:
- 2) Նախկին ծիանոցը տան անդամների կողմից օգտագործվում էր որպես մառան:
- 3) Որ նրանք հայ լինեն ես իմ հայությունից կիրաժարվեմ հայր հող կվարի ծառ կտնիկի շալակով փայտ կրերի:
- 4) Արևի շողերի միջից երևում էր կանաչով պատված բլուրը իսկ բլրի հետևում արտերն էին:

62

Քանաստեղծական նշված ժողովածուներից որը ո՞ւմն է:

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| ա. «Հեթանոս երգեր»   | 1. Գրիգոր Չոհրապ    |
| բ. «Լուռ ցավեր»      | 2. Ավետիք Խասհակյան |
| գ. «Երգեր ու վերքեր» | 3. Համն Սահյան      |
| դ. «Որոտանի եղերքին» | 4. Դանիել Վարուժան  |

- 1) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 2) ա-2, բ-1, գ-3, դ-4
- 3) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 4) ա-3, բ-1, գ-2, դ-4

63

Տրված հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:

«Մի պատկեր կար, որ երևակայության մեջ ամբողջացնում էր նա... Դա իր մեղքն էր, ցածությունը, իր անզբությունը: Եվ ինչքան երկար նայում էր այդ դիակին, այնքան կակծում էր սիրտը, և այնքան էլ հածոյք, հանգիստ էր զգում: Անդամալոյժը դառավ մի սուրբ, մի պաշտելի սուրբ նրա համար: Նրա դիակը սրբազործում էր ծերուկի մեղապից սիրտը»:

- 1) «Ավելորդը», Դերենիկ Դեմիրճյան
- 2) «Մթնաձոր», Ակսել Բակունց
- 3) «Համբերանքի չիրուխը», Ավետիք Խասհակյան
- 4) «Քառո», Ալեքսանդր Շիրվանզադե

64

**Պնդումներից քանի՞սն են ճիշտ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ:**

- Մարտի թեժ պահին, երբ զորքն անձնվիրաբար պաշտպանում է Բյուրականի ամրոցը, կաթողիկոսը զաղտնի հեռանում է:
- Աշուտ Երկարի վարձկան եգերացիները վճռական պահերին միշտ նրա կողքին էին:
- Սահակ Սևադայի որդիները քաջաբար զոհվում են Դվինի մատույցներում:
- Հովհաննես կաթողիկոսը փորձում է հաշտեցնել արքային և Սահակ Սևադային:

65

**Բառերից քանիսի՞ առաջին արմատն է միավաճիկ.**

գարեջուր, ուխտադրուժ, ուսանող, սրբազն, մարդասպան, ծվաճե, նենգադավ, հպանցիկ, վարդաբույր, գրադարան, թիավարել, բարձրաշխարհիկ:

66

**Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են պարագա:**

Տարածեց ձեռքը իշխանը վիտքով,  
Լոեց դահլիճը պերճ ապարանքի,  
Պատվիրակները պատմեցին վշտով  
Թշվառ վիճակը մայր հայրենիքի:  
Զայրացավ հոգին քաջ զորակարի,  
Համհարզները իր սաստիկ զայրացան,  
Առավ ընկերներին հին կոհվների,  
Եվ հողը հայրենի թողին, հեռացան:  
Գնացին նրանք. սահմանը չանցած՝  
Ծինականն արտից առավ մի բուռ հող,

Լցրեց քսակը և արագընթաց  
Հասավ իշխանի ապարանքը ճոխ:  
Հին հայրենիքի մեղեղիները հին  
Սեղմ կարկաչեցին առվակների պես,  
Գուսանը վառման երգեց սրտազին  
Շերմակ լեռների կատարները վես:  
Աչքերը լցված սրտի արցունքով՝  
Խոնարհում է հեզ գլուխն արքենի,  
Եվ երեք անգամ անհուն կարոտով  
Համբուրում է նա հողը հայրենի:

67

**Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Մի քանի ամպամ վիորձեցի խոսել հետոր՝ զիտենալու համար՝ արդյոք հա՞նդ է, բայց  
նա աչքերը չոռում էր, նայում էր երեսիս ապուշի պես, ապա ժկուտում էր և նորից զլուխը  
կրծքին բերում:*

1. **արդյոք** – վերաբերական, **թերում** էր – սահմանական եղանակ, չեզոք սեռ
2. **բայց** – համադասական շաղկապ, **պես** – կապ, հետադրություն
3. **նորից** – մակրայ, **նայում** էր - անկատար անցյալ, ներզործական սեռ
4. **մի քանի** – որոշյալ դերանուն, **խոսել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
5. **զիտենալու** – ապակատար դերբայ, ածանցավոր, **համար** – կապ, հետադրություն

68

## Ստքերից քանի՞սն են հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:

Մարդն իր ամրող կյանքի ընթացքում ունենում է 52 ատամ, որոնցից քսանը աճում և ընկնում են մանկական տարիքում: Առաջնների բարձրությունը տատանվում է 1,75 սմ-ից (մեծ սեղանատամ) մինչև 2,7 սմ (ժանիքներ): Տարեց մարդու բոլոր 32 ատամները մի գծով շարելու դեպքում կատացվի 70 սմ-անոց շարան: Մարդու ծնույի սեղման ուժը կարող է հասնել մինչև 80 կգ-ի (1 քառ. սմ-ի վրա): Կծելու ուժգնության ռեկորդը պատկանում է մի ամերիկացու, որը զիտափորձի ժամանակ կարողացել է 1 քառ. սմ-ի վրա դրսերել 442 կգ սեղման ուժ: Վերջին ժամանակներում ավելի հաճախ է պատահում, երբ իմաստության ատամները ուղղակի չեն աճում կամ լինելը ճեղքել չեն կարողանում, այսինքն՝ մարդու ատամների քանակը նվազման է զնում՝ հասնելով 28-ի: Դա կապված է կերակրի հետ, որը զնալով դառնում է ավելի փափուկ և դուրածամ, իսկ նախամարդու ծնույի շափր վաղուց հետովոր հիշողություն է դարձել:

- Եթե մարդու երեսուներկու ատամները կշռեն, կատացվի չորս հարյուր քառասուներկու գրամանոց և յոթանասուն սանտիմետրանոց շարան:
- Տարբեր մարդկանց ատամնաշարի սեղման ուժը տարբեր է, և կծելու ուժգնության ռեկորդը պատկանում է մի ամերիկացու, որը զիտափորձի ժամանակ կարողացել է 1 քառ. սմ-ի վրա դրսերել 442 կգ սեղման ուժ:
- Հասուն մարդու ատամնաշարն ունի հիսուներկու ատամ, որոնց բարձրությունը տատանվում է 1,75 սմ-ից մինչև 2,7 սմ:
- Բավարար վիճակում զտնվող մարտղական համակարգ ունեցող մարդկանց իմաստության ատամները հաճախ դուրս չեն գալիս:

69

## Նշել այն բառերի համարները, որոնցում նախածանց կա.

1. մակագիր, 2. անդրաշխարհ, 3. անիմաստ, 4. անթացուա, 5. տհաս, 6. նախնադար, 7. հակամետ, 8. անագ, 9. վերադարձ:

70

## Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ք ճիշտ է, Սխալ է, Զգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Սահմանական, ըղձական և ենթադրական եղանակների ժխտականը կազմվում է դրական ձևերին չմասնիկ ավելացնելով:
2. **Ն**և **չ**սովորական անցյալ կատարյալի կազմության ժամանակ ընկնում են:
3. **ԱՌ**և **ԵՌ** սովորական բայերը ինչպես **ա**, այնպես էլ **ե** խոնարհման են:
4. **Ե**խոնարհման բոլոր բայերը եզակի հրամայականում ստանում են **ի՛ռ** վերջավորություն:
5. Բայի բաղադրյալ դիմավոր ժամանակածներ ունի միայն սահմանական եղանակը:
6. Ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների բոլոր ժամանակածները պարզ են: